Հավելված N 1
ՀՀ կառավարության 2011 թվականի
հուլիսի 14-ի N 1024 -Ն որոշման

Ց Ա Ն Կ

ԱՌՈՂՋԱՐԱՆԱՅԻՆ ԲՈՒԺՄԱՆ ՆՊԱՍՏԻ ԻՐԱՎՈՒՆՔ
ՏՎՈՂ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Տուբերկուլյոզ

Հետինֆարկտային վիճակներ

Ստամոքսի, տասներկումատնյա աղիքի հետվիրահատական վիճակներ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2011 թվականի
հուլիսի 14-ի N 1024 -Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՆԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՆՊԱՍՏԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ, ՆՇԱՆԱԿՄԱՆ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ

ԳԼՈՒԽ I. ՎԱՐՁՈՒ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻՆ ՏՐՎՈՂ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՆԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ, ՆՇԱՆԱԿՄԱՆ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

1. «Ժամանակավոր անաշխատունակության նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (այսուհետ՝ օրենք) սահմանված՝ վարձու աշխատողին տրվող ժամանակավոր անաշխատունակության նպաստը (այսուհետ՝ նպաստ) հաշվարկում, նշանակում և վճարում է գործատուն՝ հիմք ընդունելով բժշկական հաստատության կողմից տրված ժամանակավոր անաշխատունակության թերթիկը (Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքում՝ անաշխատունակության թերթիկները, այսուհետ՝ անաշխատունակության թերթիկ):

2. Բացառությամբ հղիության և ծննդաբերության նպաստի՝ վարձու աշխատողի նպաստը վճարվում է ժամանակավոր անաշխատունակության ժամանակաշրջանի աշխատանքային օրերի համար՝ սկսած երկրորդ աշխատանքային օրվանից, բայց ոչ ավելի, քան մինչև բժշկասոցիալական փորձաքննություն իրականացնող իրավասու պետական մարմնի կողմից հաշմանդամության խմբի սահմանումը կամ աշխատանքից ազատվելը: Վարձու աշխատողին տրվող հղիության և ծննդաբերության նպաստը վճարվում է գործատուի անհատական իրավական ակտի հիման վրա՝ հղիության և ծննդաբերության արձակուրդի մեջ գտնվելու ժամանակահատվածի բոլոր աշխատանքային օրերի համար:

3. Բացառությամբ հղիության և ծնողաբերության նպաստի՝ ժամանակավոր անաշխատունակության 2-րդ, 3-րդ և 4-րդ աշխատանքային օրերի համար գործատուն վարձու աշխատողի նպաստը վճարում է իր միջոցների հաշվին, իսկ 5-րդ աշխատանքային օրվանից սկսած՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին: Ընդ որում, սույն կարգի 2-րդ և 3-րդ կետերի դրույթները ժամանակավոր անաշխատունակության նույն դեպքի համար կիրառվում են մեկ անգամ՝ անկախ ժամանակավոր անաշխատունակության ժամանակաշրջանի համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տրված թերթիկների քանակից:

4. Ժամանակավոր անաշխատունակության նպաստի գումարից պահման ենթակա եկամտահարկը հաշվարկվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահման-ված կարգով:

5. Եթե վարձու աշխատողից անկախ պատճառներով հղիության և ծնողաբերության արձակուրդը չի ձևակերպվել, ապա նպաստը նշանակվում և վճարվում է սկսած այն ժամկետից, երբ վարձու աշխատողը չի ներկայացել աշխատանքի, բայց ունեցել է հղիության և ծնողաբերության արձակուրդի իրավունք:

6. Նպաստը հաշվարկվում և նշանակվում է սույն կարգով նախատեսված փաստա-թղթերը ներկայացվելուց հետո՝ մինչև առաջիկա աշխատավարձը վճարելու օրը:

7. Վարձու աշխատողը նպաստի հաշվարկման և նշանակման համար գործատուին է ներկայացնում՝

1) բժշկական հաստատության կողմից տրված անաշխատունակության թերթիկը (օրենքով սահմանված դեպքում՝ անաշխատունակության թերթիկի լուսապատճենը).

2) մինչև 18 տարեկան անհատական խնամքի կարիք ունեցող կամ հաշմանդամ երեխայի առողջարանային բուժման ընթացքում նրա խնամքն իրականացնելու հետևանքով

ընտանիքի հիվանդ անդամի խնամքի նպաստ ստանալու դեպքում՝ առողջարանային ուղեգրի լուսապատճենը.

3) առողջարանային ուղեգրի լուսապատճենը՝ առողջարանային բուժման նպաստի դեպքում.

4) օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասի չորրորդ պարբերությամբ սահմանված դեպքում՝ այլ գործատուի վճարած՝ եկամտի մասին տեղեկանքը:

8. Գործատուն նպաստը հաշվարկում է ժամանակավոր անաշխատունակության ժամանակահատվածի աշխատանքային (ընդհանուր հանգստյան օրեր չհանդիսացող) օրերի համար: Ընդ որում, հղիության և ծննդաբերության նպաստը հաշվարկելիս ընդհանուր հանգստյան օր է համարվում կիրակին, իսկ հնգօրյա աշխատանքային շաբաթվա դեպքում՝ շաբաթը և կիրակին՝ անկախ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 155-րդ հոդվածին համաձայն կազմակերպության կամ տվյալ վարձու աշխատողի համար այլ հանգստյան օր սահմանված լինելու հանգամանքից: Ժամանակավոր անաշխատունակության մյուս տեսակի նպաստները հաշվարկելիս՝ հանգստյան օր են համարվում կազմակերպության կամ տվյալ վարձու աշխատողի համար Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 155-րդ հոդվածին համաձայն սահմանված հանգստյան օրերը:

9. Այլ գործատուի վճարած եկամտի մասին տեղեկանքն ստանալու համար անձը, սոցիալական ապահովության պետական ծառայության (այսուհետ՝ ծառայություն)՝ իր բնակության վայրի կամ այլ գործատուի պետական գրանցման վայրի տարածքային բաժին (այսուհետ՝ տարածքային բաժին) է ներկայացնում դիմում՝ նշելով նպաստը վճարող գործատուի նույնականացման տվյալները, աշխատանքի ընդունվելու ժամկետը: Դիմումին կցվում են նաև անձը հաստատող փաստաթղթի, սոցիալական ապահովության քարտի (առկայության դեպքում) և այլ գործատուի հետ աշխատանքային հարաբերությունների մեջ գտնված լինելը

(աշխատանքի ընդունվելը և աշխատանքից ազատվելը) հաստատող փաստաթղթերի լուսապատճենները:

10. Տարածքային բաժինն այլ գործատուի վճարած եկամտի մասին տեղեկանքը տրամադրում է՝

1) դիմումատուի վերաբերյալ անձնավորված հաշվառման համակարգի տեղեկատվական բազայում կամ գործատուի կողմից ներկայացված, սակայն չմուտքագրված անձնավորված հաշվետվություններում առկա տեղեկատվության հիման վրա.

2) այլ գործատուի կողմից տրամադրված՝ ըստ ամիսների դիմումատուին վճարված (հաշվարկված) աշխատավարձի և դրան հավասարեցված եկամուտների, ինչպես նաև ժամանակավոր անաշխատունակության նպաստի չափի մասին փաստաթղթի հիման վրա՝ սույն կետի 1-ին ենթակետով սահմանված տեղեկատվության բացակայության դեպքում:

11. Սույն կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված՝ այլ գործատուի կողմից տրամադրված փաստաթուղթը կարող է ներկայացնել դիմումատուն:

12. Եթե դիմումատուն չի ներկայացնում սույն կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված՝ այլ գործատուի կողմից տրամադրված փաստաթուղթը, ապա փաստաթուղթը գործատուից ստանում է տարածքային բաժինը՝ լիազոր մարմնի սահմանած կարգով:

13. Այլ գործատուի վճարած եկամտի մասին տեղեկանքը լիազոր մարմինը պատվիրված նամակով ուղարկում է դիմողին կամ դիմումատուին է տալիս առձեռն՝ անձը հաստատող փաստաթղթի հիման վրա:

14. Գործատուին նույնականացնելու անհնարինության դեպքում՝ տարածքային բաժինը դրա մասին տեղեկացնում է դիմումատուին՝ լիազոր մարմնի սահմանած կարգով:

15. Վարձու աշխատողի միջին ամսական աշխատավարձը հաշվարկվում է [n-12]-րդ ամսվա 1-ից մինչև [n-1]-րդ ամսվա վերջին օրն ընկած ժամանակահատվածի համար վարձու աշխատողին վճարված (հաշվարկված) եկամուտը տասներկուսի բաժանելու միջոցով, որտեղ՝

[n-12]-րդ ամիսը՝ ժամանակավոր անաշխատունակությունն առաջանալու ամսվան նախորդող տասներկուերորդ ամիսն է,

[n-1]-րդ ամիսը՝ ժամանակավոր անաշխատունակությունն առաջանալու ամսվան նախորդող ամիսն է:

Սույն կետով սահմանված եկամտում հաշվառվում է՝

1) սոցիալական վճարների հաշվարկման օբյեկտ համարվող աշխատավարձը և դրան հավասարեցված եկամուտները.

2) ժամանակավոր անաշխատունակության նպաստը:

16. Ժամանակավոր անաշխատունակությունն առաջանալու օրվա դրությամբ վարձու աշխատողի՝ տվյալ գործատուի մոտ աշխատելու ժամանակահատվածը տասներկու ամսվանից պակաս լինելու (տվյալ գործատուի մոտ [n-12]-րդ ամսից հետո աշխատանքի ընդունվելու) դեպքում՝ սույն կարգի 15-րդ կետում նշված եկամտում հաշվառվում է նաև այլ գործատուի կողմից ժամանակավոր անաշխատունակությունն առաջանալու ամսվան նախորդող տասներկուերորդ օրացուցային ամսվա 1-ից մինչև նպաստը հաշվարկող գործատուի մոտ աշխատանքի ընդունվելու ամսվան նախորդող ամսվա վերջին օրն ընկած ժամանակահատվածի համար վճարված (հաշվարկված) սոցիալական վճարների հաշվարկման օբյեկտ համարվող աշխատավարձը և դրան հավասարեցված եկամուտները, ինչպես նաև նպաստը՝ եթե վարձու աշխատողը ժամանակավոր անաշխատունակությունն առաջանալու օրվա դրությամբ այդ (այլ) գործատուի հետ աշխատանքային հարաբերությունների մեջ չի գտնվում: Ընդ որում, մեկ ամսվա համար կարող է հաշվառվել մեկ գործատուի կողմից վարձու աշխատողին վճարված եկամուտը:

17. Ժամանակավոր անաշխատունակությունն առաջանալու ամսվան նախորդող տասներկուամյա ժամանակահատվածի այն ամիսների փոխարեն, որոնց ընթացքում վարձու աշխատողը գտնվել է մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում (այսուհետ՝

խնամքի արձակուրդ), հաշվի է առնվում խնամքի արձակուրդն սկսվելու ամսվան նախորդող ժամանակահատվածի՝ համապատասխան թվով հերթական օրացուցային ամիսների համար վճարված (հաշվարկված) եկամուտը:

18. Համատեղությամբ աշխատող վարձու աշխատողի հիմնական աշխատավայրի գործատուն անաշխատունակության թերթիկի հիման վրա նշանակում է անաշխատունակության նպաստը, ինչպես նաև ստորագրությամբ հաստատում է (կնիքի առկայության դեպքում՝ կնքում է) աշխատողի ներկայացրած, սակայն դեռևս չլրացված, անաշխատունակության թերթիկի լուսապատճենը, ինչը հիմք է հանդիսանում մյուս գործատուի կամ ծառայության կողմից նպաստի նշանակման համար:

19. Գործատուն լրացնում է անաշխատունակության թերթիկի համապատասխան տողերը և ներկայացված փաստաթղթերի հիման վրա հաշվարկում և նշանակում է նպաստը:

20. Որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագրով վարձու աշխատողին հղիության և ծննդաբերության նպաստ նշանակվում է անկախ աշխատանքային ստաժի տևողությունից՝ մինչև աշխատանքային պայմանագրի ժամկետի ավարտն ընկած ժամանակահատվածի համար: Որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագրով վարձու աշխատողին հիվանդության, պրոթեզավորման, առողջարանային բուժման և ընտանիքի հիվանդ անդամի խնամքի նպաստ նշանակվում է, եթե նա վերջին մեկ տարվա ընթացքում մինչև ժամանակավոր անաշխատունակության ծագումն աշխատել է 3 ամսվանից ոչ պակաս կամ վերջին 2 տարվա ընթացքում՝ 10 ամսվանից ոչ պակաս՝ մինչև աշխատանքային պայմանագրի ժամկետի ավարտն ընկած ժամանակահատվածի համար: Որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագրով վարձու աշխատողներին տրվող միջին ամսական աշխատավարձը և նպաստը հաշվարկվում են ընդհանուր հիմունքներով:

21. Պարտադիր սոցիալական ապահովության վճարների կատարումից՝ օրենքով սահմանված կարգով ազատված գործատուների կողմից վարձու աշխատողներին տրվող

նպաստը հաշվարկվում, նշանակվում և վճարվում է ընդհանուր հիմունքներով՝ գործատուի միջոցների հաշվին:

ԳԼՈՒԽ II. ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻՆ ԵՎ ՆՈՏԱՐՆԵՐԻՆ ՏՐՎՈՂ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՆԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ, ՆՇԱՆԱԿՄԱՆ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

22. Անհատ ձեռնարկատերերին և նոտարներին (այսուհետ՝ ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահոված անձ) տրվող նպաստները հաշվարկում, նշանակում և վճարում է ծառայությունը (տարածքային բաժինների միջոցով)՝ անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելուց հետո մեկամսյա ժամկետում:

23. Ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահոված անձին նպաստ վճարվում է օրենքով սահմանված ժամանակաշրջանի բոլոր օրացուցային օրերի համար, բայց ոչ ավելի, քան մինչև օրենքով սահմանված կարգով ձեռնարկատիրական գործունեության դադարեցումը (բացառությամբ ժամանակավոր դադարեցումը) կամ նոտարի պաշտոնավարման ավարտը (գործունեության դադարեցումը): Ծառայությունը, ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահոված անձին նպաստ վճարելիս, եկամտահարկի պահումն իրականացնում է հարկային գործակալի կողմից եկամտահարկը հաշվարկելու և պահելու համար սահմանված կարգով: Ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահոված անձին նպաստ չի վճարվում, եթե ժամանակավոր անաշխատունակությունը ծագել է օրենքով սահմանված կարգով ձեռնարկատիրական գործունեության դադարեցումից (այդ թվում՝ ժամանակավոր դադարեցումից) կամ նոտարի պաշտոնավարման ավարտից հետո:

24. Նպաստ ստանալու համար ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահոված անձն իր՝ որպես ապահովադիր պետական գրանցման վայրի տարածքային բաժին է ներկայացնում դիմում, հետևյալ կից փաստաթղթերով՝

1) բժշկական հաստատության կողմից տրված անաշխատունակության թերթիկը, իսկ սույն կարգով սահմանված դեպքերում՝ անաշխատունակության թերթիկի լուսապատճենը.

2) հարկային մարմնի տված տեղեկանքը ժամանակավոր անաշխատունակության դեպքին նախորդող տարվա՝ օրենքով սահմանված կարգով սոցիալական վճարների հաշվարկման օբյեկտ համարվող եկամտի մասին.

3) ընտանիքի հիվանդ անդամի խնամքի նպաստի դեպքում՝ հիվանդ երեխայի անձը հաստատող փաստաթղթի լուսապատճենը, իսկ մինչև 18 տարեկան՝ անհատական խնամքի կարիք ունեցող կամ հաշմանդամ երեխայի առողջարանային բուժման դեպքում՝ նաև առողջարանային ուղեգրի լուսապատճենը:

25. Ծառայությունը, հիմք ընդունելով ներկայացրած փաստաթղթերը, հաշվարկում, նշանակում և վճարում է նպաստը:

26. Ծառայությունը, մինչև յուրաքանչյուր ամսվա 15-րդ աշխատանքային օրը, նախորդ ամսվա ընթացքում ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահոված անձին նշանակված (հաշվարկված, վերահաշվարկված) նպաստների վերաբերյալ հարկային մարմին է ներկայացնում հետևյալ տեղեկատվությունը՝

1) ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահոված անձի ազգանունը, անունը, հարկ վճարողի հաշվառման համարը, անձնագրի սերիան ու համարը, գրանցման վայրի հասցեն, սոցիալական քարտի համարը.

2) ժամանակավոր անաշխատունակության ժամանակահատվածի սկիզբը և վերջը, ժամանակավոր անաշխատունակության դեպքին նախորդող տարվա՝ օրենքով սահմանված սոցիալական վճարների հաշվարկման օբյեկտ համարվող եկամտի չափը, հաշվարկված նպաստի չափը:

27. Հարկային մարմինը սույն կարգի 26-րդ կետով սահմանված տեղեկատվությունն արտացոլում է համապատասխան տեղեկատվական բազայում:

ԳԼՈՒԽ III. ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱԶԱՏԱԶՐԿՎԱԾ ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼԻ ՆՊԱՍՏԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՈՒ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

28. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկում (այսուհետ՝ հիմնարկ) գտնվող ազատազրկված դատապարտյալի (այսուհետ՝ դատապարտյալ) համար հաշվարկվում և նրան են վճարվում միայն հիվանդության, հղիության և ծննդաբերության նպաստներ՝ ընդհանուր հիմունքներով:

29. Դատապարտյալի նպաստը նշանակում ու վճարում է հիմնարկը՝ ընդհանուր հիմունքներով:

30. Դատապարտյալին անաշխատունակության թերթիկ տրամադրում է հիմնարկի կամ հիմնարկի գտնվելու վայրի վարչական տարածքն սպասարկող առողջապահական կազմակերպությունը:

31. Տևական հիվանդության դեպքում դատապարտյալը բժշկասոցիալական փորձաքննության է ուղարկվում անաշխատունակության սկսվելու օրվանից 3 ամսվանից ոչ ուշ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

ԳԼՈՒԽ IV. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

32. Մինչև <<Ժամանակավոր անաշխատունակության նպաստների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքն ուժի մեջ մտնելը (2011 թվականի մայիսի 21-ը)՝ ավարտված ժամանակավոր անաշխատունակության ժամանակահատվածի համար վարձու աշխատողի նպաստը և նպաստը հաշվարկելու համար հիմք ընդունվող միջին ամսական աշխատավարձը հաշվարկվում են մինչև <<Ժամանակավոր անաշխատունակության նպաստների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքն ուժի մեջ մտնելը սահմանված կարգով՝ բացառությամբ հղիության և ծննդաբերության նպաստի:

33. <<Ժամանակավոր անաշխատունակության նպաստների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքն ուժի մեջ մտնելուց հետո (2011 թվականի մայիսի 21-ին և դրանից հետո) ավարտված ժամանակավոր անաշխատունակության ժամանակահատվածի համար վարձու աշխատողի նպաստը և նպաստը հաշվարկելու համար հիմք ընդունվող միջին ամսական աշխատավարձը հաշվարկվում են <<Ժամանակավոր անաշխատունակության նպաստների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքն ուժի մեջ մտնելուց հետո սահմանված կարգով՝ բացառությամբ հղիության և ծննդաբերության նպաստի:

34. <<Ժամանակավոր անաշխատունակության նպաստների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ հղիության և ծննդաբերության արձակուրդում գտնվող (հղիության և ծննդաբերության նպաստի իրավունք ձեռք բերած) վարձու աշխատողի հղիության և ծննդաբերության նպաստը և նպաստը հաշվարկելու համար հիմք ընդունվող միջին ամսական աշխատավարձը հաշվարկվում են մինչև <<Ժամանակավոր անաշխատունակության նպաստների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքն ուժի մեջ մտնելը սահմանված կարգով, եթե <<Ժամանակավոր անաշխատունակության նպաստների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքն ուժի մեջ մտնելուց հետո սահմանված կարգով հաշվարկվելու դեպքում նպաստի չափն ավելի ցածր է:

35. Մինչև սույն կարգն ուժի մեջ մտնելը՝ սահմանված ձևի անաշխատունակության թերթիկի հիման վրա նպաստ նշանակելիս (վերահաշվարկելիս)՝ անաշխատունակության

թերթիկի դարձերեսը չի լրացվում: Այս դեպքում, նպաստը հաշվարկողը (վերահաշվարկողը), անաշխատունակության թերթիկին կցում է սույն կարգն ուժի մեջ մտնելուց հետո սահմանված ձևի անաշխատունակության թերթիկի դարձերեսին արտացոլվող տեղեկատվություն պարունակող՝ հաստատված (կնիքի առկայության դեպքում՝ կնքված) տեղեկանք:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված N 3
ՀՀ կառավարության 2011 թվականի
հուլիսի 14-ի N 1024 -Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԳՈՐԾԱՏՈՒՆ՝ ՎԱՐՁՈՒ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՆԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՓՈԽՀԱՏՈՒՑԵԼՈՒ

1. Գործատուն վարձու աշխատողներին ժամանակավոր անաշխատունակության նպաստ (այսուհետ՝ նպաստ) վճարում է տվյալ ամսվա համար հաշվարկված պարտադիր սոցիալական ապահովության վճարների (այսուհետ՝ սոցիալական վճար) հաշվին՝ վճարված նպաստի գումարի չափով նվազեցնելով տվյալ ամսվա վճարվող սոցիալական վճարների գումարները:

2. Եթե տվյալ ամսվա համար հաշվարկված սոցիալական վճարները բավարար չեն նպաստը վճարելու համար, ապա գործատուն նպաստի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հաշվին վճարվող գումարների պակասող մասը վճարում է իր միջոցներից, որը փոխհատուցում է սոցիալական ապահովության պետական ծառայությունը (այսուհետ՝ ծառայություն):

3. Ծախսը փոխհատուցելու նպատակով գործատուն սոցիալական վճարների մասին ամսական հաշվետվության հետ մեկտեղ հարկային մարմին է ներկայացնում տեղեկանք՝ համաձայն ձևի՝ կցելով հաշվետու ամսվա ընթացքում վճարված նպաստների նշանակման և վճարման համար հիմք հանդիսացած ժամանակավոր անաշխատունակության թերթիկների լուսապատճենները:

4. Սոցիալական վճարների վերաբերյալ եռամսյակային հաշվետվություն ներկայացնող գործատուն ծախսը փոխհատուցելու նպատակով սույն կարգի 3-րդ կետում նշված տեղեկանքը

և փաստաթղթերը ներկայացնում է եռամսյակային հաշվետվության հետ մեկտեղ: Սոցիա-լական վճարների վերաբերյալ եռամսյակային հաշվետվություն ներկայացնող գործատուն, հաշվետու եռամսյակի 1-ին կամ 2-րդ ամսվա համար հաշվարկված պարտադիր սոցիալական ապահովության վճարների հաշվին կատարված ծախսը փոխհատուցելու համար, կարող է դիմել նաև մինչև հաշվետու եռամսյակի ավարտը: Այս դեպքում սույն կարգի 3-րդ կետում նշված տեղեկանքը ներկայացվում է 2 օրինակից:

5. Հարկային մարմինը 10 օրացուցային օրվա ընթացքում ուսումնասիրում է ներկայացված փաստաթղթերում առկա տեղեկատվությունը, նպաստի հաշվարկման, նշա-նակման և վճարման համապատասխանությունն օրենքին, հաստատում (կնքում) է տեղեկանքը և վերադարձնում գործատուին՝ սույն կարգով սահմանված դեպքում նշելով փոխհատուցման ենթակա ծախսի գումարը, կամ գրավոր մերժում է տեղեկանքը հաստատելը՝ նշելով մերժման պատճառը և գործատուի հետագա գործողությունները: Սույն կարգի 4-րդ կետում նշված տեղեկանքը 2 օրինակից ներկայացնելու դեպքում՝ տեղեկանքի մեկ օրինակը մնում է հարկային մարմնում:

6. Տեղեկանքը հաստատելը մերժվում է, եթե՝

1) փաստաթղթերում ներկայացված տեղեկությունները թերի են.

2) տեղեկանքում ներկայացված տեղեկություններում առկա է թվաբանական սխալ.

3) նպաստը հաշվարկվել, նշանակվել և վճարվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության խախտմամբ կամ նպաստի հաշվարկման մեջ առկա է թվաբանական սխալ, և հարկային մարմնի կողմից կատարված վերահաշվարկի արդյունքում պարզվում է, որ առկա չէ փոխհատուցման ենթակա ծախսի գումար կամ առկա է այլ գումար:

7. Սույն կարգի 6-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով սահմանված դեպքերում մերժման հիմքերը վերացվելուց ու հարկային մարմին համապատասխան փաստաթղթեր ներկայաց-

նելուց հետո 5 օրացուցային օրվա ընթացքում հարկային մարմինը հաստատում (կնքում) ու գործատուին է վերադարձնում տեղեկանքը:

8. Գործատուն հարկային մարմնի հաստատած (կնքած) տեղեկանքը ներկայացնում է ծառայություն:

9. Ծառայությունը, հաստատած (կնքած) տեղեկանքը ներկայացվելուց հետո 15 օրացուցային օրվա ընթացքում, գործատուի բանկային հաշվեհամարին է փոխանցում ծախսի գումարը:

10. Սոցիալական վճարների կատարումից օրենքով սահմանված կարգով ազատված գործատուների՝ իրենց վարձու աշխատողների նպաստները վճարելու ուղղությամբ կատարված ծախսերը չեն փոխհատուցվում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Ձև

Փաստաթղթի հերթական համարը _____
_____ 20 ____ թ.
(լրացվում է հարկային մարմնի կողմից)

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ԳՈՐԾԱՏՈՒԻՆ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)								
Կազմակերպության անվանումը (անհատ ձեռնարկատիրոջ կամ նոտարի անունը, ազգանունը)								
Գտնվելու (բնակության) վայրը								
Հեռախոսահամարը								
Նպաստը վճարելու ամսաթիվը (օրը, ամիսը, տարեթիվը)								
Սոցիալական ապահովության վճարի հաշվին կատարված ծախսը (թվերով և տառերով), այդ թվում								
ա) հղիության և ծննդաբերության նպաստ (թվերով և տառերով)								
բ) ժամանակավոր անաշխատունակության այլ նպաստներ (թվերով և տառերով)								
գ) վարձու աշխատողի թաղման նպաստը (թվերով և տառերով)								
Փոխհատուցման ենթակա ծախսի գումարը (թվերով և տառերով)								

Ընդհանուր տեղեկություններ

	Տվյալ ամիսը	Տվյալ ամսվան նախորդող		
		1-ին ամիս	2-րդ ամիս	3-րդ ամիս
Աշխատողների թիվը, այդ թվում՝				
Մինչև 50.000 դրամ ստացող				
50.001 դրամից 100.000 դրամ ստացող				
100.001 դրամից 200.000 դրամ ստացող				
200.000 դրամից ավելի ստացող				
Աշխատավարձի ֆոնդը				
Միջին աշխատավարձի չափը				

Առդիր _____ թերթ ----- ----------20 ____ թ.

Կազմակերպության ղեկավար կամ անհատ ձեռնարկատեր _____ Կ.Տ.
(անունը, ազգանունը, ստորագրությունը)

Ուսումնասիրվել է ներկայացված տեղեկատվությունը և նպաստի հաշվարկման համապատասխանությունն օրենքին:

Փոխհատուցման ենթակա գումարի չափը կազմում է _____
(թվերով և տառերով)
դրամ:

ՀՏ-ի մասնագետ _____
(անունը, ազգանունը, ստորագրությունը)

Կ.Տ.

ՀՏ-ի պետ _____
(անունը, ազգանունը, ստորագրությունը)

------ ---------- 20 ____ թ.

Տեղեկություններ տվյալ ամսում նպաստ ստացած վարձու աշխատողների մասին

(հազ. դրամ)

Սոցիալական քարտի համարը	Անձը հաստատող փաստաթղթի (անձնագրի) սերիան և համարը	Անաշխատունակությունը ծագելու ամսաթիվը (օրը, ամիսը, տարին)	Աշխատանքի ընդունվելու ամսաթիվը (օրը, ամիսը, տարին)	Աշխատավարձի չափը (հազ. դրամ)	Միջին աշխատավարձի չափը (հազ. դրամ)
1	2	3	4	5	6	7
1						
2						
3						
4						
5						

6-րդ սյունակում լրացվում է տվյալ աշխատողին անաշխատունակությությունը ծագելուն նախորդող ամսվա համար վճարված աշխատավարձի չափը:

7-րդ սյունակում լրացվում է միջին աշխատավարձի չափը, որից հաշվարկվել է նպաստը:

Տեղեկություններ տվյալ ամսում ժամանակավոր անաշխատունակության մեջ գտնված անձանց փոխարինող վարձու աշխատողների մասին (լրացվում է նպաստ ստացած վարձու աշխատողների հերթականությանը համապատասխան)

(հազ. դրամ)

Սոցիալական քարտի համարը	Անձը հաստատող փաստաթղթի (անձնագրի) սերիան և համարը	Փոխարինելու ամսաթիվը (օրը, ամիսը, տարին)	Աշխատավարձի չափը (հազ. դրամ)	Լրավճարը (հազ. դրամ)	Նշումներ
1	2	3	4	5	6	7
1						
2						
3						
4						
5						

4-րդ սյունակում լրացվում է ժամանակավոր անաշխատունակության մեջ գտնված անձին աշխատանքի ընդունելու կամ նրա պարտականությունները, պայմանագրում կատարված փոփոխությունների կամ ներքին իրավական ակտի հիման վրա այլ անձի վրա դնելու ամսաթիվը:

5-րդ այունակում, ժամանակավոր անաշխատունակության մեջ գտնված անձի փոխարեն նոր անձ աշխատանքի ընդունելու դեպքում՝ լրացվում է փոխարինող անձի աշխատավարձի չափը (պայմանագրի կամ ներքին իրավական ակտի համաձայն), իսկ ժամանակավոր անաշխատունակության մեջ գտնված անձի պարտականություններն այլ վարձու աշխատողի վրա դնելու դեպքում՝ այդ անձին նախորդ ամսվա համար վճարված աշխատավարձի չափը:

6-րդ այունակում լրացվում է ժամանակավոր անաշխատունակության մեջ գտնված անձի պարտականություններն այլ վարձու աշխատողի վրա դնելու համար այդ վարձու աշխատողի աշխատավարձին վճարվող հավելավճարի չափը:

7-րդ այունակում նշում է կատարվում ժամանակավոր անաշխատունակության մեջ գտնված անձին փոխարինող (փոխարինած) վարձու աշխատողների բացակայության դեպքում:

Կազմակերպության ղեկավար կամ անհատ ձեռնարկատեր _____

(անուն, ազգանուն, ստորագրություն)

Հավելված N 4
ՀՀ կառավարության 2011 թվականի
հուլիսի 14-ի N 1024 -Ն որոշման

Ձ Ե Վ

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՆԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԹԵՐԹԻԿԻ

Սերիա N

ԱՆԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԹԵՐԹԻԿ

ՆԱԽՆԱԿԱՆ - ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ №.....ԹԵՐԹԻԿԻ
(համապատասխանն ընդգծել)

Հիվանդության պատմություն (քարտ) N _____

..... Կ.Տ.
(թերթիկը տրամադրող բժշկի պաշտոնը, ազգանունը և ստորագրությունը)

.....
(բուժհիմնարկի անվանումն ու գտնվելու վայրը)

..... (անաշխատունակի ազգանունը, անունը, հայրանունը)

..... (ծննդյան օրը, ամիսը, տարին)

..... (սոց. քարտի համարը)

.....
(բնակության վայրը)

Հ Ա Տ Մ Ա Ն Գ Ի Ծ

Հ Ա Տ Մ Ա Ն Գ Ի Ծ

ԱՆԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԹԵՐԹԻԿ Սերիա N Բուժհիմնարկի Կ.Տ.

ՆԱԽՆԱԿԱՆ - ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ N..... ԹԵՐԹԻԿԻ
(համապատասխանն ընդգծել)

.....

(բուժհիմնարկի անվանումն ու գտնվելու վայրը)

Տրված է .....20 թ.....
(ամսաթիվը, ամիսը)

....

(անաշխատունակի ազգանունը, անունը, հայրանունը) (ծնն. օրը, ամիսը, տարին) (սոց. քարտի համարը)

ԱԽՏՈՐՈՇՈՒՄ	ԵԶՐԱՓԱԿԻՉ ԱԽՏՈՐՈՇՈՒՄ

Անաշխատունակության պատճառը [ ] հիվանդություն [ ] առողջարանային բուժում [ ] հղիության և ծննդաբերության արձակուրդ
[ ] հիվանդի խնամք [ ] պրոթեզավորում

.....

(համապատասխանը նշել)

.....

(խնամքի անհրաժեշտության պատճառով առաջացած ժամանակավոր անաշխատունակության դեպքում նշել հիվանդի ա.ա.հ., ծնն. օրը, ամիսը, տարին ու դիագնոզը)

ՌԵԺԻՄ

Նշում՝ ռեժիմի խախտման մասին .....

Բուժող բժշկի ստորագրությունը .....

Ստացիոնարում գտնվելու ժամանակահատվածը

20 ..... թ.....-ի .....-ից մինչև 20 ....թ. .....-ի ..... -ը.....

Գլխավոր բժշկի ստորագրությունը.....

Կ.Տ.

ՈՒղարկված է ԲՍՓՀ ,, ,,..... .....20 ....թ.

Ուղեգրած բժշկի .....
(ԱԱՀ, ստորագրությունը) Կ.Տ.

ԲՍՓՀ եզրակացությունը .....

.....

ԲՍՓՀ նախագահ .....
(ԱԱՀ, ստորագրությունը) Կ.Տ.

ԱՆԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԻ		ԱՆԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ ԱՆՑԿԱՑՐԱԾ ԱՆՁԻ (ԱՆՁԱՆՑ)	
սկիզբը (օրը, ամիսը, տարին)	վերջը (օրը, ամիսը, տարին՝ բառերով)	պաշտոնը և ա.ա.հ.	ստորագրությունը

Անաշխատունակության թերթիկ Սերիա N

Կ.Տ.

ՆԵՐԿԱՅԱՆԱԼ ԱՇԽԱՏԱՆՔԻ..... .....

(ամսաթիվը և ամիսը՝ բառերով կամ այլ նշումներ) (բժշկի պաշտոնը, ազգանունը և ստորագրությունը)

Î.Î

ԼՐԱՑՎՈՒՄ Է ԳՈՐԾԱՏՈՒԻ ԿՈՂՄԻՑ (ՄԻԱՅՆ ՎԱՐՁՈՒ ԱՇԽԱՏՈՂԻ ԴԵՊՔՈՒՄ)

.....

Բացակայել է _____-ից _____-ը (ներառյալ) .....

օրը, ամիսը, տարին օրը, ամիսը, տարին (անմիջական ղեկավարի ա.ա.հ. և ստորագրությունը)

Աշխատանքային պայմանագրի տեսակը՝

- ☐ անորոշ ժամկետով
- ☐ որոշակի ժամկետով

Աշխատանքային շաբաթի տևողությունը՝

- ☐ հնգօրյա
- ☐ վեցօրյա

.....

(համապատասխանը նշել)

Տվյալ կազմակերպությունում աշխատում է 20 __ թ. _____-ի ------- -ից:

		ԹՎԵՐՈՎ	ԲԱՌԵՐՈՎ
1.	Միջին ամսական աշխատավարձը հաշվարկելու համար հիմք հանդիսացող եկամտի չափը (դրամ), այդ թվում		
1.1.	նպաստը հաշվարկող գործատուի կողմից վճարված (հաշվարկած) եկամտի չափը (դրամ)		
1.2.	այլ գործատուի կողմից վճարված (հաշվարկած) եկամտի չափը (դրամ)		
2.	Միջին ամսական աշխատավարձի չափը (դրամ)		
3.	Աշխատանքային օրերի քանակը, որոնց համար հաշվարկվել է նպաստը		
4.	Հաշվարկված (վճարված) նպաստի չափը (դրամ), այդ թվում՝		
4.1.	գործատուի միջոցների հաշվին (դրամ)		
4.2.	ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին (դրամ)		
5.	Հաշվարկված եկամտահարկի չափը (դրամ)		

ԼՐԱՑՎՈՒՄ Է ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺՆԻ ԿՈՂՄԻՑ (ՄԻԱՅՆ ԱՁ-Ի ԿԱՄ ՆՈՏԱՐԻ ԴԵՊՔՈՒՄ)

.....

		ԹՎԵՐՈՎ	ԲԱՌԵՐՈՎ
1.	Միջին ամսական եկամուտը հաշվարկելու համար հիմք հանդիսացած տարեկան եկամտի չափը (դրամ)		
2.	Հաշվարկված միջին ամսական եկամուտը (դրամ)		

3.	Օրացուցային օրերի քանակը, որոնց համար հաշվարկվել է նպաստը		
4.	Հաշվարկված նպաստի չափը (դրամ)		

..... Î.Î

(նպաստի չափը հաշվարկող պաշտոնատար անձի պաշտոնը,ազգանունը և ստորագրությունը) Կ.Տ.

ԼՐԱՑՎՈՒՄ Է ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԴԵՊՔՈՒՄ ԳՈՐԾԱՏՈՒԻ ԿԱՄ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺՆԻ ԿՈՂՄԻՑ ՆՊԱՍՏԸ ՎԵՐԱՀԱՇՎԱՐԿԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ

		ԹՎԵՐՈՎ	ԲԱՌԵՐՈՎ
1.	Վերահաշվարկված նպաստի չափը, դրամ		
2.	Վերահաշվարկված նպաստից հաշվարկված եկամտահարկի չափը (միայն վարձու աշխատողի դեպքում), դրամ		
3.	Վճարման ենթակա գումարի չափը, դրամ		
4.	Հետպահվող գումարի չափը, դրամ		

.....

(նպաստի չափը հաշվարկող պաշտոնատար անձի պաշտոնը,ազգանունը և ստորագրությունը)

Կ.Տ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված N 5
ՀՀ կառավարության 2011 թվականի
հուլիսի 14-ի N 1024 -Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՆԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԹԵՐԹԻԿԻ ԼՐԱՑՄԱՆ ՈՒ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

ԳԼՈՒԽ I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում են բժշկական հաստատությունների կողմից ժամանակավոր անաշխատունակության թերթիկի (այսուհետ՝ անաշխատունակության թերթիկ) լրացման և տրամադրման կանոնները:

2. Սահմանված ձևի անաշխատունակության թերթիկը քաղաքացու ժամանակավոր անաշխատունակության ժամանակահատվածը հաստատող փաստաթուղթ է:

3. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությանը ժամանակավոր անաշխատունակության թերթիկների ձեւաթղթերի տրամադրումն ապահովում է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայությունը:

4. Ամբուլատոր պայմաններում բուժման անհրաժեշտության հետևանքով առաջացած ժամանակավոր անաշխատունակության դեպքում (այդ թվում՝ ընտանիքի հիվանդ անդամի խնամքի անհրաժեշտության դեպքում) անաշխատունակության թերթիկները տրամադրում են պոլիկլինիկաների, գյուղական բժշկական ամբուլատորիաների, գյուղական առողջության կենտրոնների, ամբուլատորիաների բուժող բժիշկները՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացվող ժամանակավոր անաշխատունակության փորձաքննության հիման վրա:

5. Անաշխատունակության թերթիկները տրամադրվում են <<Ժամանակավոր անաշխատունակության նպաստների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ ժամանակավոր անաշխատունակության նպաստի իրավունք ունեցող անձանց՝ հետևյալ դեպքերում՝

1) հիվանդության (վնասվածքի) պատճառով առաջացած ժամանակավոր անաշխատունակության.

2) պրոթեզավորման պատճառով առաջացած ժամանակավոր անաշխատունակության.

3) առողջարանային բուժման անհրաժեշտության պատճառով առաջացած ժամանակավոր անաշխատունակության.

4) հղիության ու ծննդաբերության պատճառով առաջացած ժամանակավոր անաշխատունակության,

5) ընտանիքի անդամի հիվանդության (վնասվածքի) պատճառով առաջացած խնամքի անհրաժեշտության:

ԳԼՈՒԽ II. ԱՆԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԹԵՐԹԻԿԸ ԼՐԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐԸ

6. Անաշխատունակության թերթիկը, բացառությամբ հիվանդանոցային բժշկական հաստատությունում (ստացիոնարում) գտնվելու հետևանքով առաջացած ժամանակավոր անաշխատունակության դեպքի, քաղաքացուն հատկացվում է (բացվում է) այն ստանալու համար քաղաքացու դիմելու (անաշխատունակությունը ծագելու) օրը:

7. Անաշխատունակության թերթիկները լրացվում են հայերենով: Ընդ որում, <<Եզրափակիչ ախտորոշում>> սյունակում պարտադիր նշվում է հիվանդի ախտորոշումը (ժամանակավոր անաշխատունակության պատճառը)՝ այն չփոխարինելով հիվանդության ախտանշաններով կամ համախտանիշներով:

8. Եթե ամբուլատոր պայմաններում բուժման անհրաժեշտության հետևանքով առաջացած ժամանակավոր անաշխատունակության ժամանակահատվածում հիվանդը հոսպիտալացվում է, ապա հիվանդին և (կամ) նրան խնամող անձին տրամադրվում է ժամանակավոր անաշխատունակության թերթիկ՝ որպես անաշխատունակության ժամանակահատվածի վերջին օր նշելով հոսպիտալացմանը նախորդող օրը, իսկ աշխատանքի ներկայանալու օրը նշելու համար նախատեսված տողում նշվում է՝ <<Հիվանդը հոսպիտալացվել է>>:

9. Հիվանդության (վնասվածքի), պրոթեզավորման, ընտանիքի հիվանդ անդամի խնամքի անհրաժեշտության պատճառով առաջացած ժամանակավոր անաշխատունակության յուրաքանչյուր 15-րդ օրվանից հետո շարունակվող ժամանակավոր անաշխատունակության դեպքում, անաշխատունակ անձի պահանջով նրան տրվում է անաշխատունակության թերթիկ՝ ժամանակավոր անաշխատունակության փաստացի օրերի համար՝ աշխատանքի ներկայանալու օրը նշելու համար նախատեսված տողում կատարելով <<Շարունակելի>> նշումը:

10. Սույն կարգի 9-րդ կետով սահմանված դեպքում՝ ժամանակավոր անաշխատունակության յուրաքանչյուր հաջորդ ժամանակահատվածի համար տրվող անաշխատունակության թերթիկում նշվում են նաև նախորդ անաշխատունակության թերթիկի սերիան ու համարը:

11. Անաշխատունակության թերթիկը կորցնելու դեպքում՝ անաշխատունակության թերթիկ տվող մարմինը քաղաքացուն տալիս է կրկնօրինակ՝ հիմք ընդունելով գործատուի կամ սոցիալական ապահովության պետական ծառայության տված՝ տվյալ ժամանակահատվածի համար քաղաքացուն անաշխատունակության նպաստ նշանակված չլինելու մասին տեղեկանքը:

12. Ամբուլատոր պայմաններում բուժվելու դեպքում անաշխատունակության թերթիկը ստորագրվում է ժամանակավոր անաշխատունակության փորձաքննություն իրականացնելու

իրավասություն ունեցող անձի կամ մարմնի անդամների կողմից, իսկ կնիքի առկայության դեպքում՝ կնքվում է բժշկական հաստատության կնիքով:

13. Հիվանդանոցային բժշկական հաստատությունում (ստացիոնարում) գտնվելու հետևանքով առաջացած ժամանակավոր անաշխատունակության դեպքում անաշխատունակության թերթիկն ստորագրվում է բուժող բժշկի կողմից՝ բաժնի վարիչի հետ համատեղ, իսկ կնիքի առկայության դեպքում՝ կնքվում բժշկական հաստատության կնիքով:

14. Սխալ լրացված և քաղաքացիներին չտրամադրված, ինչպես նաև խոտանված անաշխատունակության թերթիկների ձևաթղթերը ենթակա են հաշվառման և վերադարձվում են սոցիալական ապահովության պետական ծառայություն:

15. Ժամանակավոր անաշխատունակության փորձաքննության, անաշխատունակության թերթիկներ տալուն, պահելուն և հաշվառելուն վերաբերող իրավական ակտերի պահանջների կատարումն ապահովելու համար պատասխանատու է բժշկական հաստատության ղեկավարը:

16. Անաշխատունակության թերթիկներ տրամադրելու մասին բժշկական հաստատության որոշումները կարող են բողոքարկվել վերադասության կամ դատական կարգով:

17. Անաշխատունակության թերթիկներ տրամադրելուն վերաբերող իրավական ակտերի պահանջները խախտողները պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

ԳԼՈՒԽ III. ԱՆԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԹԵՐԹԻԿԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ (ՎՆԱՍՎԱԾՔԻ) ՊԱՏՃԱՌՈՎ ԱՌԱՋԱՑԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՆԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ

18. Հիվանդության (վնասվածքի) պատճառով առաջացած ժամանակավոր անաշխատունակության դեպքում վարձու աշխատողին անաշխատունակության թերթիկ տրվում է հիվանդության (վնասվածքի) ամբողջ ժամանակաշրջանի համար՝ աշխատունակությունը

կորցնելու օրվանից մինչև դրա վերականգնումը կամ բժշկասոցիալական փորձաքննություն իրականացնող իրավասու պետական մարմնի կողմից հաշմանդամության խմբի սահմանումը կամ հաշմանդամության խմբի վերանայումը:

19. Տևական հիվանդություն ունեցող հիվանդները բժշկասոցիալական փորձաքննության են ենթարկվում, եթե անաշխատունակությունն սկսելու օրվանից անցել է 3 ամիս, և հիվանդի աշխատունակությունը դեռևս չի վերականգնվել:

20. Սույն կարգի 19-րդ կետով սահմանված դեպքում՝ բուժող բժիշկը հիվանդին բժշկասոցիալական փորձաքննության է ուղեգրում այն ժամկետում, երբ մինչև սահմանված 3 ամիսը լրանալը մնացել է 10 օր: Ընդ որում, հիվանդի բժշկասոցիալական փորձաքննությունն իրականացվում է եռամսյա ժամկետը լրանալու օրվանից ոչ ուշ:

21. Եթե, ըստ բժշկասոցիալական փորձաքննության եզրակացության, բավարար հիմք չկա հիվանդին հաշմանդամ ճանաչելու համար, և նա շարունակում է մնալ ժամանակավորապես անաշխատունակ, ապա անաշխատունակության թերթիկում նշված ժամկետը կարող է երկարաձգվել տվյալ տարածքն սպասարկող բժշկափորձագիտական հանձնաժողովի կողմից՝ առավելագույնը ևս 3 ամիս ժամկետով:

22. Ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահովված անձին հիվանդության (վնասվածքի) պատճառով առաջացած ժամանակավոր անաշխատունակության դեպքում անաշխատունակության թերթիկ տրվում է միայն հիվանդանոցային բժշկական հաստատությունում (ստացիոնարում) բուժման ամբողջ ժամանակաշրջանի համար, բայց մեկ օրացուցային տարվա ընթացքում 60 օրացուցային օրվանից ոչ ավելի:

23. Հիվանդության (վնասվածքի) պատճառով առաջացած ժամանակավոր անաշխատունակության դեպքում, եթե բուժումն իրականացվում է ամբուլատոր պայմաններում, անաշխատունակության թերթիկը տալիս է անձին առողջության առաջնային պահպանման ծառայություններ մատուցող բժշկական հաստատությունը:

24. Եթե ժամանակավոր անաշխատունակությունն առաջացել է ոչ իր բնակության վայրում, ապա անաշխատունակության թերթիկ տրամադրվում է նրա ժամանակավորապես գտնվելու վայրում բժշկական հաստատության ղեկավարի հաստատմամբ: Ընդ որում, անաշխատունակության թերթիկ է տրամադրվում այն ժամանակահատվածի համար, որի ընթացքում բնակության վայր տեղափոխվելը, ըստ բժշկի եզրակացության, կարող է վտանգել հիվանդի կյանքը կամ վնասել առողջությունը կամ բուժման գործընթացը:

Սույն կետով սահմանված դեպքում՝ անաշխատունակության ժամանակահատվածը 7 օրացուցային օրը գերազանցելու դեպքում դրա մասին եզրակացությունը տալիս է տվյալ տարածքի բժշկական հաստատության բժշկափորձագիտական հանձնաժողովը:

25. Եթե շարունակվում է անձի՝ ոչ իր հաշվառման վայրում առաջացած ժամանակավոր անաշխատունակությունը, բայց հիվանդը կարող է տեղափոխվել իր բնակության վայրը, ապա աշխատանքի ներկայանալու օրը նշելու համար նախատեսված տողում նշվում է <<Մեկնել է մշտական բնակության վայր>>:

26. Սույն կարգի 25-րդ կետով սահմանված դեպքում՝ անձի բնակության վայրում տրվող ժամանակավոր անաշխատունակության թերթիկում նշվում են նախորդ անաշխատունակության թերթիկի սերիան ու համարը:

27. Հիվանդանոցային բժշկական հաստատությունից (ստացիոնարից) դուրս գրվելուց հետո անաշխատունակության թերթիկում նշված ժամկետը երկարաձգում է հիվանդանոցային բժշկական հաստատության (ստացիոնարի) բուժող բժիշկը՝ բաժանմունքի վարիչի հետ համատեղ, մինչև այն ժամկետը, որը նշանակված է բժշկական հաստատություն ներկայանալու, բժշկին տուն կանչելու կամ ամբուլատոր պայմաններում լիաբուժում ստանալու համար, սակայն միանվագ ոչ ավելի, քան 7 օրացուցային օրով:

Եթե նշված ժամկետից հետո շարունակվում է անձի ժամանակավոր անաշխատունակությունը, ապա անաշխատունակության մնացած ժամանակահատվածի համար

անաշխատունակության թերթիկ է տրամադրվում ամբուլատոր պայմաններում բուժվելու հետևանքով առաջացած ժամանակավոր անաշխատունակության դեպքում տրվող անաշխատունակության թերթիկ տրամադրելու համար սահմանված կարգով:

28. Առողջարանային բուժման նպաստի իրավունք տվող հիվանդությունների ցանկում ներառված հիվանդությունների հետևանքով հիվանդանոցային բժշկական հաստատությունից (ստացիոնարից) անմիջապես առողջարան՝ լիաբուժման ուղեգրվելու դեպքում անաշխատունակության թերթիկում դրա մասին կատարվում է նշում:

ԳԼՈՒԽ IV. ԱՆԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԹԵՐԹԻԿԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄՆ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԴԱՄԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ (ՎՆԱՍՎԱԾՔԻ) ՊԱՏՃԱՌՈՎ ԱՌԱՋԱՑԱԾ ԽՆԱՄՔԻ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ

29. Ընտանիքի անդամի հիվանդության (վնասվածքի) պատճառով առաջացած խնամքի անհրաժեշտության դեպքում խնամող անձին անաշխատունակության թերթիկ է տրվում բժշկի եզրակացության հիման վրա:

30. Վարձու աշխատողին ընտանիքի հիվանդ անդամի խնամքի դեպքում անաշխատունակության թերթիկ է տրվում՝

1) տնային (ամբուլատոր) պայմաններում ընտանիքի հիվանդ չափահաս անդամի խնամքի անհրաժեշտության դեպքում՝ 7 օրացուցային օրվանից ոչ ավելի.

2) տնային (ամբուլատոր) պայմաններում հիվանդ երեխայի խնամքի անհրաժեշտության դեպքում՝ 24 օրացուցային օրվանից ոչ ավելի, իսկ վարակիչ հիվանդությունների պատճառով երեխայի խնամքի անհրաժեշտության դեպքում՝ 28 օրացուցային օրվանից ոչ ավելի.

3) հիվանդանոցային բժշկական հաստատությունում (ստացիոնարում) գտնվող հիվանդ երեխայի խնամքն իրականացնելու դեպքում՝ հիվանդանոցում գտնվելու ամբողջ ժամանակաշրջանի համար.

4) մինչև 18 տարեկան՝ անհատական խնամքի կարիք ունեցող կամ հաշմանդամ երեխայի առողջարանային բուժման ընթացքում նրա խնամքն իրականացնելու դեպքում՝ երեխայի առողջարանային բուժման ամբողջ ժամանակաշրջանի համար, բայց ուղեգրում նշված ժամանակաշրջանից ոչ ավելի, ընդ որում, նպաստ է տրվում օրացուցային տարվա ընթացքում մեկ անգամ.

5) մինչև 3 տարեկան երեխայի կամ մինչև 18 տարեկան հաշմանդամ երեխայի՝ տնային (ամբուլատոր) պայմաններում խնամքի համար, եթե մայրը (խնամակալը, հոգաբարձուն) հիվանդության կամ ընտանիքի մյուս հիվանդ անդամի հետ հիվանդանոցային բժշկական հաստատությունում (ստացիոնարում) գտնվելու պատճառով ի վիճակի չէ երեխայի խնամքն իրականացնել, համապատասխան բժշկական փաստաթղթի առկայության դեպքում անաշ-խատունակության թերթիկ է տրվում երեխայի խնամքն իրականացնող վարձու աշխատողին, երեխայի մոր (խնամակալի, հոգաբարձուի) հիվանդության կամ նրա՝ հիվանդանոցային բժշկական հաստատությունում (ստացիոնարում) գտնվելու ամբողջ ժամանակաշրջանի համար:

31. Ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահովված անձին ընտանիքի հիվանդ անդամի խնամքի դեպքում անաշխատունակության թերթիկ է տրվում՝

1) հիվանդանոցային բժշկական հաստատությունում (ստացիոնարում) գտնվող հիվանդ երեխայի խնամքն իրականացնելու դեպքում՝ հիվանդանոցում գտնվելու ամբողջ ժամանա-կաշրջանի համար.

2) մինչև 18 տարեկան՝ անհատական խնամքի կարիք ունեցող կամ հաշմանդամ երեխայի առողջարանային բուժման ընթացքում նրա խնամքն իրականացնելու դեպքում՝ երեխայի առողջարանային բուժման ամբողջ ժամանակաշրջանի համար, բայց ուղեգրում նշված ժամանակաշրջանից ոչ ավելի, ընդ որում, նպաստ է տրվում օրացուցային տարվա ընթացքում մեկ անգամ:

32. Իր հաշվառման վայրում չգտնվող անձի հիվանդության դեպքում նրան խնամող անձին ևս տրամադրվում է անաշխատունակության թերթիկ՝ ընտանիքի հիվանդ անդամի խնամքի պատճառով առաջացած ժամանակավոր անաշխատունակության թերթիկ տրամադրելու համար սահմանված ընդհանուր հիմունքներով:

ԳԼՈՒԽ V. ԱՆԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԹԵՐԹԻԿԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ ՀՂԻՈՒԹՅԱՆ ԵՎ ԾՆՆԴԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՈՎ ԱՌԱՋԱՑԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՆԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ

33. Հղիության և ծննդաբերության դեպքում անաշխատունակության թերթիկներ են տրամադրում կանանց կոնսուլտացիաների բժիշկները, իսկ եթե այդպիսիք չկան՝ ընդհանուր բժշկական հաստատությունների մանկաբարձ-գինեկոլոգները: Այդպիսի մասնագետներ չլինելու դեպքում անաշխատունակության թերթիկ է տրամադրում ընդհանուր ընդունելություն կատարող բժիշկը:

34. Անաշխատունակության թերթիկ է տրվում վարձու աշխատողին և ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահովված անձին՝

ա) 140 օրացուցային օր տևողությամբ արձակուրդի ժամանակաշրջանի համար (հղիության՝ 70 օրացուցային օր, ծննդաբերության՝ 70 օրացուցային օր).

բ) 155 օրացուցային օր տևողությամբ արձակուրդի ժամանակաշրջանի համար (հղիության՝ 70 օրացուցային օր, ծննդաբերության՝ 85 օրացուցային օր)՝ բարդ ծննդաբերության դեպքում.

գ) 180 օրացուցային օր տևողությամբ արձակուրդի ժամանակաշրջանի համար (հղիության ՝ 70 օրացուցային օր, ծննդաբերության՝ 110 օրացուցային օր)՝ միաժամանակ մեկից ավելի երեխաներ ծննդաբերելու դեպքում:

Հղիության և ծննդաբերության պատճառով առաջացած ժամանակավոր անաշխատունակության դեպքում տրամադրվում է մեկ անաշխատունակության թերթիկ, իսկ բարդ ծննդաբերության և միաժամանակ մեկից ավելի երեխաներ ծննդաբերելու դեպքում, որպես նախորդ անաշխատունակության թերթիկի շարունակություն, լրացուցիչ տրվում է նոր անաշխատունակության թերթիկ՝ համապատասխանաբար 15 և 40 օր տևողությամբ՝ անաշխատունակության թերթիկում նշելով նախորդ անաշխատունակության թերթիկի սերիան ու համարը:

Նորածին որդեգրած կամ նորածնի խնամակալ նշանակված վարձու աշխատողին անաշխատունակության թերթիկ տրվում է միայն հետծննդյան արձակուրդի ժամանակաշրջանի համար՝ խնամակալ նշանակվելու կամ երեխա որդեգրելու օրվանից մինչև նորածնի 70 օրական դառնալը (2 և ավելի նորածին որդեգրած կամ խնամակալ նշանակված անձին՝ մինչև 110 օրական դառնալը):

35. Եթե քաղաքացին անաշխատունակության թերթիկ ստանալու համար դիմում է հղիության արձակուրդի իրավունք ձեռք բերելուց հետո, ապա քաղաքացուն հատկացվում է անաշխատունակության թերթիկ՝ հղիության և ծննդաբերության արձակուրդի մնացած ժամանակաշրջանի համար, բայց ոչ ավելի, քան մինչև ծննդաբերության արձակուրդի ժամանակաշրջանի վերջը:

36. Հղիության 154-րդ օրը և 154 օրվանից հետո վաղաժամ ծննդաբերելու և հղիության արձակուրդում չգտնվելու դեպքում անաշխատունակության թերթիկ է տրվում միայն հետծննդյան արձակուրդի ժամանակաշրջանի համար:

37. Մինչև հղիության 154-րդ օրը և հղիության արհեստական (այդ թվում՝ բժշկական և սոցիալական ցուցումներով) կամ ինքնաբեր ընդհատման դեպքերում ժամանակավոր անաշխատունակության ամբողջ ժամանակաշրջանի համար տրվում է անաշխատունակության թերթիկ՝

հիվանդության (վնասվածքի) պատճառով առաջացած ժամանակավոր անաշխատունակության դեպքում անաշխատունակության թերթիկ տրամադրելու համար սահմանված կարգով:

38. Ծնողաբերության արձակուրդի ժամանակաշրջանի համար անաշխատունակության թերթիկ է տրամադրվում նաև այն դեպքում, երբ երեխան ծնվել է մահացած կամ մահացել է ծնվելուց հետո:

ԳԼՈՒԽ VI. ԱՆԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԹԵՐԹԻԿԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄՆ ԱՌՈՂՋԱՐԱՆԱՅԻՆ ԲՈՒԺՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՈՎ ԱՌԱՋԱՑԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՆԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ

39. Առողջարանային բուժման անհրաժեշտության պատճառով առաջացած ժամանակավոր անաշխատունակության դեպքում անաշխատունակության թերթիկ է տրվում միայն առողջարանային բուժման նպաստի իրավունք տվող հիվանդությունների ցանկում ներառված հիվանդությունների հետևանքով հիվանդանոցային բժշկական հաստատությունից (ստացիոնարից) անմիջապես առողջարան լիաբուժման ուղարկված վարձու աշխատողին, ինչպես նաև հակատուբերկուլյոզային առողջարան մեկնած վարձու աշխատողին, եթե ստացիոնարում գտնվելու պատճառով առաջացած ժամանակավոր անաշխատունակությունը վերականգնվելուց անցել է առավելագույնը մեկ ամիս:

40. Սույն կարգի 39-րդ կետով սահմանված դեպքում անաշխատունակության թերթիկ է տրամադրվում առողջարանում գտնվելու ամբողջ ժամանակաշրջանի համար:

41. Անաշխատունակության թերթիկը տրամադրում է առողջարանի գլխավոր բժիշկը՝ հիմք ընդունելով հիվանդանոցային բժշկական հաստատությունում (ստացիոնարում) բուժվելու հետևանքով առաջացած ժամանակավոր անաշխատունակության ժամանակաշրջանի համար անձին տրամադրված՝ առողջարանային լիաբուժման անհրաժեշտության մասին նշում պարունակող անաշխատունակության թերթիկի լուսապատճենը:

42. Անաշխատունակության թերթիկում նշվում են այն տրամադրելու համար հիմք հանդիսացած անաշխատունակության թերթիկի սերիան ու համարը:

ԳԼՈՒԽ VII. ԱՆԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԹԵՐԹԻԿԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ ՊՐՈԹԵԶԱՎՈՐՄԱՆ ՊԱՏՃԱՌՈՎ ԱՌԱՋԱՑԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՆԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ

43. Վարձու աշխատողին և ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահովված անձին պրոթեզավորման պատճառով առաջացած ժամանակավոր անաշխատունակության դեպքում անաշխատունակության թերթիկ է տրամադրվում հիվանդանոցային բժշկական հաստատությունում (ստացիոնարում) գտնվելու ամբողջ ժամանակաշրջանի համար՝ ընդհանուր հիմունքներով:

ԳԼՈՒԽ VIII. ՀՂԻՈՒԹՅԱՆ ԵՎ ԾՆՆԴԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՈՎ ԱՌԱՋԱՑԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՆԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ԱՆԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԹԵՐԹԻԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆԸ ՏՐԱՄԱԴՐԵԼԸ

44. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունը, մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա վերջին աշխատանքային օրը, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայությանն է տրամադրում նախորդ եռամսյակի ընթացքում հղիության և ծնունդաբերության պատճառով առաջացած ժամանակավոր անաշխատունակության դեպքում տրամադրված անաշխատունակության թերթիկների մասին հետևյալ տեղեկատվությունը՝

1) անաշխատունակության թերթիկը տվող բուժհաստատությունը.

2) անաշխատունակության թերթիկի սերիան ու համարը.

3) անաշխատունակության թերթիկն ստացող անձի անունը, ազգանունը, անձնագրի սերիան ու համարը.

4) ժամանակավոր անաշխատունակության ժամանակահատվածն ըստ անաշխատունակության թերթիկի:

45. Սույն կարգի 44-րդ կետով սահմանված տեղեկատվությունը տրամադրվում է էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության <<Mullbery>> համակարգի միջոցով:

46. Բժշկական հաստատությունները հղիության և ծննդաբերության պատճառով առաջացած ժամանակավոր անաշխատունակության դեպքում տրամադրած անաշխատունակության թերթիկների մասին անձնավորված տեղեկատվությունը Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությանն են տրամադրում Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի սահմանած կարգով:

ԳԼՈՒԽ IX. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

47. Մինչև սույն կարգն ուժի մեջ մտնելը՝ սահմանված ձևի ժամանակավոր անաշխատունակության թերթիկները վավերական են մինչև 2012 թվականի դեկտեմբերի 31-ը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված N 6
ՀՀ կառավարության 2011 թվականի
հուլիսի 14-ի N 1024 -Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՏՎԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՆԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԹԵՐԹԻԿՆ ԱՆԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՆՊԱՍՏԻ ՆՇԱՆԱԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՄԱՐՎԵԼՈՒ

1. Օտարերկրյա պետության բժշկական հաստատության տված ժամանակավոր անաշխատունակության թերթիկի (ժամանակավոր անաշխատունակության ժամանակահատվածը հաստատող այլ փաստաթղթի) (այսուհետ՝ բժշկական փաստաթուղթ) հիման վրա քաղաքացուն տրամադրվում է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ժամանակավոր անաշխատունակության թերթիկ (այսուհետ՝ անաշխատունակության թերթիկ):

2. Քաղաքացին Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն է ներկայացնում հյուպատոսական վավերացմամբ, իսկ միջազգային պայմանագրով նախատեսված դեպքում՝ ապոստիլի հիման վրա վավերացված բժշկական փաստաթուղթը և դրա նոտարական կամ հյուպատոսական կարգով վավերացված թարգմանությունը:

3. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունը ներկայացված փաստաթղթերի հիման վրա տալիս է գրավոր թույլտվություն՝ քաղաքացուն անաշխատունակության թերթիկ տրամադրելու համար:

4. Քաղաքացուն առողջության առաջնային պահպանման ծառայություններ մատուցող բժշկական հաստատությունը, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության գրավոր թույլտվության հիման վրա, անձին տրամադրում է անաշխատունակության թերթիկ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված N 7
ՀՀ կառավարության 2011 թվականի
հուլիսի 14-ի N1024 -Ն որոշման

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՆԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՆՊԱՍՏՆ ՍՏԱՑՈՂԻ ՄԱՀՎԱՆ ՊԱՏՃԱՌՈՎ ՉՍՏԱՑՎԱԾ ՆՊԱՍՏԸ ՎՃԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿԸ ԵՎ ԴՐԱՆՔ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

1. Նշանակված, սակայն անաշխատունակության նպաստի իրավունք ունեցող անձի մահվան պատճառով չստացված նպաստը (այսուհետ՝ չստացված նպաստ) վճարվում է նրա ընտանիքի չափահաս անդամին:

2. Սույն կարգի 1-ին կետում նշված դեպքում չստացված նպաստն ստանալու համար՝ նպաստ նշանակող մարմին են ներկայացվում նպաստի իրավունք ունեցող անձի մահվան վկայականը, ընտանիքի՝ չստացված նպաստն ստացող չափահաս անդամի դիմումը, անձնագիրն ու դրա լուսապատճենը: Ընդ որում, չստացված նպաստը վճարվում է անձի մահվան օրվանից սկսած վեցամսյա ժամկետում փաստաթղթերի ներկայացման դեպքում:

3. Չնշանակված նպաստը հաշվարկելու, նշանակելու և վճարելու համար մահացածի ընտանիքի չափահաս անդամը նպաստ նշանակող մարմին է ներկայացնում նպաստ նշանակելու համար անհրաժեշտ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահման-ված փաստաթղթերը և սույն կարգի 2-րդ կետում նշված փաստաթղթերը:

4. Նպաստը հաշվարկվում, նշանակվում և վճարվում է ընդհանուր հիմունքներով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված N 8
ՀՀ կառավարության 2011 թվականի
հուլիսի 14-ի N 1024 -Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՀՂԻՈՒԹՅԱՆ ԵՎ ԾՆՆԴԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԱՐՁԱԿՈՒՐԴՆ ԸՆԴՀԱՏՎԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՎՃԱՐՎԱԾ ՆՊԱՍՏԸ ՎԵՐԱՀԱՇՎԱՐԿԵԼՈՒ ԵՎ ԱՎԵԼԻ ՎՃԱՐՎԱԾ ՆՊԱՍՏԻ ԳՈՒՄԱՐԻ ՀԵՏՊԱՀՈՒՄԸ ԿԱՏԱՐԵԼՈՒ

1. Սույն կարգով սահմանվում է <<Ժամանակավոր անաշխատունակության նպաստների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 27-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված՝ հղիության և ծնունդաբերության արձակուրդն ընդհատվելու դեպքում վճարված նպաստը վերահաշվարկելու և ավելի վճարված նպաստի գումարի հետպահում կատարելու կարգը:

2. Վարձու աշխատողին վճարված նպաստը վերահաշվարկում և ավելի վճարված նպաստի գումարի հետպահում կատարում է գործատուն:

3. Անձին ավելի վճարված նպաստի գումարն արձակուրդն ընդհատվելուց մինչև հղիության և ծնունդաբերության արձակուրդի վերջին օրն ընկած ժամանակահատվածի աշխատանքային օրերի համար վճարված նպաստի գումարն է (հաշվի առնելով նպաստից հաշվարկված եկամտահարկը):

4. Գործատուն, վարձու աշխատողի համաձայնությամբ, վարձու աշխատողին վճարվող աշխատավարձից կատարում է ավելի վճարված նպաստի գումարի հետպահում, եթե վարձու աշխատողն ավելի վճարված նպաստի գումարը միանվագ չի վերադարձնում:

5. Վարձու աշխատողին ավելի վճարված նպաստի դիմաց վճարվող աշխատավարձից պահվող գումարն արտացոլվում է գործատուի՝ վարձու աշխատողի հղիության և ծնունդաբերության արձակուրդն ընդհատելու ներքին իրավական ակտում՝ վարձու աշխատողի դիմումի հիման վրա:

6. Ավելի վճարված նպաստի գումարի հետպահումը չի կարող պակաս լինել հաշվարկված աշխատավարձի 20 տոկոսից:

7. Հետպահվող գումարի չափը որոշվում է հետևյալ կարգով՝

1) հիմք ընդունելով միջին ամսական աշխատավարձը (որից հաշվարկվել է նպաստը)՝ վերահաշվարկվում է հղիության և ծննդաբերության նպաստի ու վճարման ենթակա եկամտահարկի չափը՝ հղիության և ծննդաբերության արձակուրդի առաջին օրվանից մինչև արձակուրդն ընդհատվելու օրն ընկած ժամանակահատվածի աշխատանքային օրերի համար.

2) նպաստի՝ նախկինում հաշվարկված և վերահաշվարկված չափերի տարբերությունից հանվում է եկամտահարկի՝ ավելի վճարված և վճարման ենթակա գումարի տարբերությունը՝ արդյունքն արձանագրելով որպես հետպահվող գումարի չափ:

8. Գործատուն աշխատավարձից հետպահված գումարները, որպես պարտադիր սոցիալական ապահովության վճարի գումար, վճարում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ տվյալ ամսվա սոցիալական ապահովության վճարի հետ՝ արձակուրդն ընդհատվելու ամիսն ընդգրկող եռամսյակային հաշվետվության հետ մեկտեղ՝ հարկային մարմին ներկայացնելով սույն կարգի 4-րդ կետին վերաբերող տեղեկատվություն:

9. Գործատուն, սույն կարգով սահմանված կարգով վերահաշվարկում է վարձու աշխատողին նշանակված (վճարված) նպաստը նաև այն դեպքում, երբ հղիության և ծննդաբերության արձակուրդն ընդհատվում է աշխատանքային պայմանագիրը լուծելու հետևանքով:

10. Սույն կարգի 9-րդ կետով սահմանված դեպքում գործատուն ապահովում է միանվագ եղանակով ավելի վճարված նպաստի գումարի հետպահումը և Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարելը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված N 9
ՀՀ կառավարության 2011 թվականի
հուլիսի 14-ի N 1024 -Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆԱԲԱՐ ԻՐԵՆ ԱՇԽԱՏԱՆՔՈՎ ԱՊԱՀՈՎԱԾ ԱՆՁԻՆ ԱՎԵԼԻ ՎՃԱՐՎԱԾ ՆՊԱՍՏԻ ԳՈՒՄԱՐԻ ՀԵՏՊԱՀՈՒՄԸ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՊԱԿԱՍ ՎՃԱՐՎԱԾ ՆՊԱՍՏԻ ԳՈՒՄԱՐԸ ՎՃԱՐԵԼՈՒ

1. Սույն կարգով սահմանվում է <<Ժամանակավոր անաշխատունակության նպաստների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 27-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված դեպքում ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահովված անձին ավելի վճարված նպաստի գումարի հետպահումը կատարելու և պակաս վճարած նպաստի գումարը վճարելու կարգը, ինչպես նաև ժամանակավոր անաշխատունակության ժամանակահատվածում ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահովված անձի գործունեությունը դադարեցվելու դեպքում (բացառությամբ պետական գրանցման վկայականը ժամանակավոր լիազորված մարմնին հանձնելու և գործունեությունը ժամանակավորապես դադարեցնելու դեպքի)՝ ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահովված անձին հղիության և ծննդաբերության նպաստի ավելի վճարված գումարի հետպահումը կատարելու կարգը:

2. Հարկային մարմնի կողմից իրականացված ստուգման կամ ճշտված հաշվետվության (հայտարարագրի) հիման վրա ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահովված անձի՝ նպաստը հաշվարկելու համար հիմք հանդիսացած եկամուտը (այսուհետ՝ եկամուտ) փոփոխվելու դեպքում ավելի վճարված նպաստի գումարի հետպահումը կատարում է հարկային մարմինը, իսկ պակաս վճարած նպաստի գումարը վճարում է լիազոր մարմինը:

3. Եթե հարկային մարմնի կողմից իրականացված ստուգման արդյունքում ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահովված անձի եկամուտը նվազել է, ապա հետպահվող նպաստի գումարի չափն արտացոլվում է ստուգման ակտում:

4. Եթե ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահովված անձի եկամուտը նվազել է ճշտված հաշվետվություն (հայտարարագիր) ներկայացնելու արդյունքում, ապա հարկային մարմինը վերահաշվարկում է նպաստը և հետպահվող գումարի մասին, հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների մասով պարտավորությունների մասին հարկ վճարողներին ծանուցելու համար սահմանված կարգով, տեղեկացնում է ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահովված անձին:

5. Սույն կարգով սահմանված՝ հետպահվող նպաստի գումարը (նախկինում հաշվարկված և վերահաշվարկված նպաստի չափերի տարբերությունը), որպես պարտադիր սոցիալական ապահովության վճարի գումար, վճարվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

6. Եթե ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահովված անձի եկամուտն ավելացել է հարկային մարմնի կողմից իրականացված ստուգման կամ ճշտված հաշվետվություն (հայտարարագիր) ներկայացնելու արդյունքում, ապա հարկային մարմինը, ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահովված անձին է տրամադրում եկամտի մասին ճշտող տեղեկանք, անձի՝ հարկային և սոցիալական վճարների գծով առաջացած լրացուցիչ պարտավորությունները կատարելուց հետո:

7. Վճարված նպաստը վերահաշվարկելու և պակաս վճարված նպաստի գումարն ստանալու համար ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահովված անձը դիմում է ներկայացնում տարածքային բաժին՝ ներկայացնելով սույն կարգի 6-րդ կետում նշված՝ ճշտող տեղեկանքը:

8. Տարածքային բաժինը մեկամսյա ժամկետում վերահաշվարկում և ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահովված անձին է վճարում պակաս վճարված նպաստի գումարը՝ վերահաշվարկված և նախկինում հաշվարկված նպաստի չափերի տարբերությունը, կատարելով նաև եկամտահարկի վերահաշվարկը:

9. Ժամանակավոր անաշխատունակության ժամանակահատվածում ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահովված անձի գործունեությունը դադարեցվելու դեպքում՝ ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահովված անձին հղիության և ծննդաբերության նպաստի ավելի վճարված նպաստի գումարի հետպահումը կատարում է հարկային մարմինը: Հետպահվող նպաստի գումարը նախկինում հաշվարկված և մինչև օրենքով սահմանված կարգով անհատ ձեռնարկատիրոջն օրենքով սահմանված կարգով հաշվառումից հանելու կամ նոտարի պաշտոնավարումն ավարտվելու (գործունեությունը դադարեցնելու) օրն ընկած ժամանակահատվածի համար հաշվարկված նպաստի չափերի տարբերությունն է:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ